

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 3

ՀՀ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

9 հոկտեմբերի 2015թ.

ք. Կապան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային խորհրդի նիստին մասնակցում էին մարզի խորհրդի անդամներ, մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներ, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներ, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ: Նիստին մասնակցում էր տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության տարածքային կառավարման և զարգացման վարչության վարչական վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետ Արկարի Չերչինյանը:

Օրակարգում՝

1. Մարզում գյուղատնտեսական աշխատանքների կատարման և աշնանացանի հետ կապված անելիքների մասին.

/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ Ն. Շադունցը/

2. Մարզի համայնքներում 2015թ. 9 ամիսների համայնքային բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի և առկա խնդիրների մասին.

/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Հովհաննիսյան/

3. Մարզում քաղաքացիական պաշտպանության ոլորտում իրականացված աշխատանքների և առաջիկա անելիքների մասին:

/ Զեկուցող՝ ՀՀ ՏԿԱԻ նախարարության Փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետ Բ. Զաքարյան/

4. Մարզում քաղաքաշինության ոլորտում իրականացված տեսչական ստուգումների արդյունքների և ծրագրերի մասին:

/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ռ. Ավետիսյան/

Մարզխորհրդի նիստը բացեց ՀՀ Սյունիքի մարզպետ Ս.Խաչատրյանը:

Օրակարգի առաջին՝ **„Մարզում գյուղատնտեսական աշխատանքների կատարման և աշնանացանի հետ կապված անելիքների մասին,**» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ Ն. Շադունցը:

Օրակարգի երկրորդ՝ **„Մարզի համայնքներում 2015թ. 9 ամիսների համայնքային բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի և առկա խնդիրների մասին,**» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Հովհաննիսյանը:

Օրակարգի երրորդ՝ **„Մարզում քաղաքացիական պաշտպանության ոլորտում իրականացված աշխատանքների և առաջիկա անելիքների մասին„**, զեկուցումով հանդես եկավ ՀՀ ՏԿԱԻ նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետ Բ. Զաքարյանը:

Օրակարգի չորրորդ՝ **„Մարզում քաղաքաշինության ոլորտում իրականացված տեսչական ստուգումների արդյունքների և ծրագրերի մասին„**, զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ռ. Ավետիսյանը:

Օրակարգում ներառված հարցերի շուրջ ելույթներով և հարցադրումներով հանդես եկան Վերիշենի համայնքի ղեկավար Արարատ Օրդյանը, Խոտ համայնքի ղեկավար Մարտիրոս Գրիգորյանը և Վարդանիձոր համայնքի ղեկավար Ալբերտ Բեկլարյանը /կցվում են զեկուցումները և ելույթները/:

Մարզի խորհրդի նիստի աշխատանքները ամփոփեց ՀՀ Սյունիքի մարզպետ Ս. Խաչատրյանը:

ՀՀ Սյունիքի մարզպետ  Ս. Խաչատրյան



Կատ. Ս. Սահակյան
Հեռ. (0285) 2-63-55